են յատուկ պահլաւների տոհմերի համար ապարանքներ, դղեակներ, բերդեր, ամրոց-ներ, ամառանոց-ձմերանոցներ մեզանից 20 դար եւ էլ աւելի առաջ եւ թողել են իրենց աւերակները գիտական աշխարհին պարզելու տխուր անցեալը: Այս ամրոց-դղեակների, սրբատաշ ապարանքների եւ տաճարների կողքին յաճախ յատակում կան աչքառարեան նախապատմական այնպիսի որմեր, ամրոցներ, որք յիշեցնում են զննողին այն շրջանը, երբ մարդիկ ո՛չ կռան ունէին քարերը փշրելու, ո՛չ լծակ ունէին ժայռերը տեղափոխելու, ո՛չ չուանի եւ լարի ուղղումներից օգտուել գիտէին. ժայռերն այնպէս են շարել, իրար վրայ դարսել, բորբրել, կազմակերպել, որ 50 դար ապրել են եւ սպառնում են այդքան էլ ապրել: Ե՞րբ էր այդ շրջանը, սրանից քանի՞ դար առաջ, դժուար է պատասխանել. անշուշտ Միկենեան շինարարութիւնից շատ առաջ էր, քանի որ այդ շրջանի նիւթերից-արհեստական գտնուած են Ճորոխի Աւազանում: Երբ Հաթթերն ու Մեսոանացիները պղինձ էին հալում Ճորոխի Աւազանում, նրանցից եթէ ո՛չ վաղ, գոնէ այդ շրջանում պղնձից ամէն տեսակ սման եւ զէնք ունենալը կասկածից դուրս է: Գլանաձեւ վիշապաղանց արձանների կերտուածքը եւ այդ Բազալտի վրայի քանդակները Միկենեան շրջանից շատ են եւ նրանց քանդակուածքը անշուշտ երկաթի